

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ
ՁԱՐՄԱՅՐ ՔԱՂԱՆԱՅ ԿԵԶԻՒՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 38

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Քրիստոնեան վտանգի դէմ
Կեանք եւ արցունք

Քաճանաները թողչակաւոր պէտք է ըլլան
«ՏԱՃԱՐ»ի պարզաբան ուժիւնները

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ս. Եփրեմ (Ե.)
Մտածողներ մեծ սիրտքերով

ՅՈՒՆՈՍ ԵՒ ՊԱՄ. ԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա-
ներու ժողովուրդի նախնան պատմութիւն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ. — Շաբաթական կարեւոր լուրեր

ԱՄԱՆԱԿ Ծ. Վ. ՕՏԱՊԱՇԵԱՆ

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

ԽԱԶԱՏՈՒՐ ՔԶ. ՊՕՂԻԿԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

ԼԵՈՆ ԹՈՂԱԹՈՅ

«ՏԱՃԱՐ»ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քաճանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեշկապա, Հայոց եկեղեցի:

بشیمکطاش ارمنى کلیسایسنده «داجار» غزنی مدیری پاپاس زارمایر افندی
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրոշ
Արսասահմանի համար	» 10 Ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարսա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրիութանաւրու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆ ԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԴՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջին. փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա-
բկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջին. փոխանորդ Տ. Պօ-
ղոս Վրդ. Դաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեղին Բհնյ. Պօղար-
եան

ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարսէն Եպս.
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան

ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքեան

ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեարոպ Բհնյ. Թորոսեան

ԶՄԻՒՌՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ քհնյ. Տ.
Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջին. փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Սրապիոն քհնյ. Այլաեան

ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տաաեան

ՈՒՇԱՔ. — Յարութիւն քհնյ. Աստարաղեան
ՊԱՆՏՐՄԱ. — ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Մ.
Վրդ. Ասլանեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջին. փոխանորդ Տ.
Թէօփիլէ Բհնյ. Օտապաշեան

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիսիոս Բհնյ. Տրէզ-
եան

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բհնյ. Դիմաքեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Դաւիթ Վրդ.

ՖՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻ 38

ՀՈԳՅԻՈՐ ԿԵԱՆՈՐ

ՔՐԻՍՏՈՍՆԵԱՆ ՎՏԱՆԳԻ ԴԷՍ

«Եթէ Աստուած ի մեր կոյս է,
ո՛վ իցէ մեր հակառակ» :
(Հռովմ. Ը. 31)

Երբ մեր ապրած կեանքը իր զուարթ ու տխուր կողմերով, իր ծնուցած ժպիտներով ու արցունքով, վերջապես իր պայծառ ու մթին դայերով դիտենք, մենք ալ յոռետեսներու հետ պիտի ըսենք. ապ. ի՞նչը չարժեք :

Ու կարծես անխառն ալ պիտի չըլլայինք ալիք ցաւալի որոշումին համեմելով երբ ամէն բան իր բնական դէն չեղած գտնենք, երբ օրէնք ու արդարութիւն, ճշմարտին պաշտպան ներկայացող Մարմիններու վայրագ ուժէն կոխոտուած է, երբ արդարապաշտի պատմութեաններ անմեղ արիւնով կը կարմրին, երբ վեհանձնութիւնը նախատուած, առաքելութիւնն անարդուած, քաջութիւնն ու գիւցազնութիւնը դաւաճանուած, անձնուիրութիւնը ծաղր ու ծանակ եղած են : Մարդկօրէն դիտելով՝ երբ աճող ընտելութիւնը զինուած է մեզ դէմ, փճացնելու համար մեր

քրտինքի արդիւնքը, մեր սրտէն խելուհամար մեր սիրելիները, այո՛, բոլոր այս աշարկու երեւոյթներուն առջեւ ուրիշ վճիռ չէինք կրնար արտասանել :

Թողունք արտաքին ու ընկերական աշխարհները. ներս նայինք. հոն ալ միևնոյն իրողութիւնները պիտի տեսնենք. մտքի ու սրտի, դատողութեան եւ զգացումի անհամաձայնութիւններ, պատճառախնդիր հակումներու դէմ կարեկից զգացումներու կռիւներ, օղջմտութեան առջեւ մոլութիւններու հակահոսանքը ամէն օր կը քանգեն մեր մէջ լաւագոյն յատկութիւններու դեղեցիկ ամբողջութիւնը :

Ու այս ամէնը՝ նիւթական իմացումով դիտուած՝ յոռետես պիտի չլինեն մեզ բռնականօրէն, մինչ Աւետարանի ոգիով ըննուած՝ կեանքի քաղցրութիւնը պիտի զգացնեն մեզի, յոյսի թիւերով պիտի շարժեն զմեզ, գիւցազնական կորույծ պիտի օժտեն մեզ վտանգներու սպառնալիքին եւ յուսահատական անձկութիւններու դէմ :

Անկողմնակալ ըլլանք այս բոլոր հակողքէմ իրողութիւններու ընտելեան մէջ, եւ շուտով պիտի համոզուինք թէ

կեանքն նկատմամբ մեր ունեցած տիրուր զաղափարները դոյութեան իրաւունք պիտի չունենային երբէք, եթէ լաւ ճանչցած ենք կեանքի գաղափարը, եթէ թափանցած ենք Աւետարանի ոգիին եւ եթէ լաւ ու ճշմարիտ քրիստոնեաներ ենք. պիտի համոզուինք թէ ո՛րքան կը սխալինք երբ նախախնամութիւնը պատասխանատու կը ճանչնանք մեր ցաւերուն ու ժգաւգութիւններուն առջեւ:

Օրէնքներու սխալ հասկացողութիւնը ամէն ժամանակ մարդերը կը ստննի ցաւալի եղբակացութիւններու, եւ կը խաթարէ անոնց մէջ ապրող յատկատեսութիւնը: Բայց մենք իբրեւ քրիստոնեաներ, պարտական ենք լաւ ըմբռնել աւետարանական ճշմարտութիւնները եւ ըստ այնմ կանոնաւորել մեր կեանքը:

Քրիստոնեայի ուրեմն մեր բնաբանը, եւ սորվինք թէ ի՞նչ է Աստուծոյ ներկայութիւնը, որու վրայ կը խօսի Առաքեալը Հռովմայեցիներուն, եւ զիտնանք թէ ի՞նչ կերպով կարող կ'ըլլանք վայելել Անոր ընկերութիւնը:

Ա. — Եթե Աստուած ի մեր կոյս ե, ո՞վ իցի մեր հակառակ: Պօղոսի այսքան սրտապնդող յայտարարութիւնը, կը հուկցուի թէ վհատած քրիստոնեաները իրենց հաւատքին մէջ հաստատութեւ համար եղած է, սորվեցնելու՝ թէ Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը ամէն տեսակ վաճառի ու ճգնաթափութեւ մէջ կրնայ ամբողջ մարդուն սիրտը, թէ Անոր աշակցութիւնը կարող է վեր առնել քրիստոնեան իր անկումներուն մէջ. բայց երբէք չի հասկցներ թէ քրիստոնեային համար վատանդներ չկան, թէ կրնանք անհող ապրիլ խորհելով որ Աստուած կը պահէ մեզ եւ կը հողայ մեր պիտքերը: Ո՛չ երբէք. մենք տեսնք թէ ընկերական, արտաքին ու ներքին աշխարհներուն մէջ ի՞նչպիսի տեւրիչ ուժեր կային. չենք կրնար անտարբեր մնալ այդ ուժերու դէմ ու արգարացնել մեր անհողութիւնը՝ նախախնամութեան վրայ մեր ունեցած հաւատքովը:

Աստուծոյ ընկերութիւնը այլապէս կը հասկնայ Առաքեալը, որուն կեանքը կը

ճանչնանք հալածանքի սարսափներուն, մուկանդ խուժանին զայրոյթին, ալեկած ծովերու մահացու ցումներուն առջեւ, աւազակներու ճիրաններուն մէջ, սուտ եղբայրներու դաւաճանութիւններու թախծին ու լսնափ չղթաներուն պրկումներուն առկ, բայց նաեւ այդ ամէնքին մէջ իր յանգչութեան ու յարստեւութեան եւ ի հարկին կանխաճառութիւններուն մէջ: Այսքան շարժուն ու կենսունակ, այսչափ եռանդուն ու չըջանալի առնձէ մը կարելի չէ սպասել անհողութեան դաս մը:

Ի՞նչ է ուրեմն Աստուծոյ ներկայութիւնը:

Գիտենք թէ մեր կեանքի ընթացքին յաջող կամ ձախող վայրկեաններուն, մեր ժպիտին ու արցունքներուն ետին կայ բան մը խորհրդաւոր, աներեւոյթ ձեւը մը որ կ'առաջնորդէ մեր քայլերը յաջողութեան մէջ ու նեցուկ կ'ըլլայ մեզ մեր լըքումներու պահերուն. քաղցր թեւադրութիւն մը որ կ'ոգեւորէ մեզ ուրախութեան ժամերուն ու կը փոփէ մեզ երբ ճնշուած կը զգանք մեր սրտերը ցաւերէ ու խղճի խայթոցներէ, անպիմադրելի ուժ մը որ կը ծանրանայ մեր վրայ, ամէն առտեւ երբ անձնատուր կ'ըլլանք մօքի քրմահաճ վերացումներու, երբ կամքի թափը կը տկարանայ մեր մէջ, իսկոյն ուղղութեան կը հրախիւ մեզ, կը ճանչցնէ մեր թերացումին ծանրութիւնը, ու կը խելագարէ մեզ՝ ծնրադրել Անհունին առջեւ: Այդ խորհրդաւոր ու ներքին թեւադրութիւնը՝ Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն է, խղճի ձայնը, որ մեր լաւագոյն մասը կը կազմէ, կրօնքի զգացումն է որ մեզ հետ կը ծնի ու կը վերջանայ մեզմով: . . .

Կ'ուզուի՞ր բացատրել այդ թեւադրութեան պէտքն ու օգուտները. յիշենք ուրեմն թէ բնութեան մէջ ամէն էակ կամ իր՝ արտաքին ուժերու կը կարօտի, անոնցմով աճիլ եւ զարգանալու համար: Մեր ներքին աշխարհը այդ ընդհանուր կանոնէն չի չեղիր: Այսպէս, վայրկեաններ կ'ունենանք ուր ո՛ր եւ է շարժառիթ խորադէս կը վիրաւորէ մեզ, պրոցէ սառնց

նուգակի մեր անձին հետ կապ ունենալու Այդ թիւրիմացութիւնը քու կողմէ արտաբերուած ցաւի խօսքով կամ բնկերիդ կողմէ արուած բացատրութիւնով, այսինքն խօսքով կը ցրուի Կրնաս այնքան խռոված ըլլալ, որ սիրելիներէդ ալ հաճօք չես զգար. մտաւոր զայրացնումի այդ միջոցին տկանջիդ հնչած մտերմիկ խօսք մը, մանուկի մը անմեղունակ ճշուողիւնը, երգի մեղմոյր չեշտ մը իսկոյն կը փարատեն միտքդ պաշարող մութ տմայերը ու կը պայծառացնեն հոգիդ: Խօսքը ուրիմն շատ անգամ լաւագոյն դարմանն է միտքը իր մոլորումներէն ազատելու եւ ամէնոր ընթացքն ուղղելու համար:

Խօսքին հաւասար ուժով կ'աղդին զանապախներ եւ պատմական անցքեր ու անձեր: Շատ անգամ այնպիսի տարտամ աւանդույթ վիճակներ կը ներկայացնեն մեր մտային կարողութիւնները, որ չենք կրնար կենսական հարցի մը առջեւ գիտակցօրէն առնալ որոշումը. մտային այդ կայունութեան մէջ ձեռք թելադրուած գաղափար մը իսկոյն կ'արթննէ ձեր իմացական կարողութիւններն իրենց թմբիւրէն, ու ազատ թռիչք կուտայ ձեր մտքին: Բայց ի՞նչ է նաեւ այն փարուած զոր խորապէս կը զգաք պատմութեան մեծադոյն ներկայացուցիչներու նկատմամբ. ի՞նչ է այն կապը որ կը միացնէ, կը նոյնացնէ նոյնիսկ, հաղարար որ տարիներ առաջ ապրած ու անցած կարկառուն գէմբերու, եթէ ոչ անոնց կեանքին կամ գործերուն հմայքը, որ հաւանաբար ձեռքին տակ կը մղէ զքեզ հետեւիլ անոնց, ապրիլ անոնց կեանքը, մեռնիլ անոնց մահը ու անմահացնել անոնց յիշատակը: Ու տակաւին ի՞նչով մեկնել հազարաւորներու եղբրական կորուստին առջեւ միլիոններու կարեկցութեան, ցաւի, յուսահատութեան կամ վրիժառութեան զգացումներու միահամուռ պոթկեցումը, եւ այդ գիտակցութեան, այդ միլիոններու կեանքին ու գործերական պային մէջ երեւցող յանկարծական փոփոխութիւնը:

Արտաքին աշխարհը, այո՛, այսպէս կամ այնպէս կը բերէ իր աղդեցութիւնը խառ-

նելու անհատներու ներքին աշխարհին վերաբերող կեանքի երկօյններուն, եւ անկէ կը ծննդէ նորանոր բարեքներ կամ անկուսներ:

Արտաքին աշխարհի ազդումներու կարգին հարկ է յիշել նաեւ ընտանիքի ազդեցութիւնը, իբր ամենէն տպաւորիչը, երբ հոն է որ կը ծննդ եւ անոր ծոցին մէջ է որ մեր գաղափարները կ'ընդունին իրենց խոյանքը:

Յիշեցէք ձեր մտնկութիւնը, հրեշտակային կեանք, ուր ձեր մօր քովիկը ծնւադիր թոթոված էք ձեր առաջին աղօթքի մրմունջը. յիշեցէք առաջին տպաւորութիւնները զոր կրած էք, երբ պատմած է ձեր ուսուցիչը Մանուկ Յիսուսին կեանքի դժերը: Փորձեցէք վերապրեցնել պատկերներու այդ յաջորդութիւնը ձեր մտքին մէջ: Փորձեցէք բաղդատել զանոնք ձեր ներկայ արամադրութիւններուն հետ, որոնք բրտացած պիտի ըլլան անշուշտ ձեր աշխարհիկ հոգերու բնութիւն տակ, զուցէ այլազունած՝ ազատ խորհողութեան հետեւանքով, կամ խաթարուած՝ վատ միջավայրի եւ ընկերակցութեան կամ դաստիարակութեան աւերող շունչէն, բայց այդ ամէնը պիտի չկարենան հիմայ մոռցնել ձեզի անհունին սեւեռած ձեր առաջին նայումը, ու անկէ ընդունուած առաջին տպաւորութեան կնիքը պիտի չկարենան ջնջել:

Եթէ կեանքի կռիւին մէջ երբեմն ցրուած են մեր մաքուր յիշատակներու ծաղիկները, մի՛ վրդովուիք. անոնք պիտի փթթին նորէն աւելի փալտուն, աւելի գունազեղ. դիտեցէք միայն անդրադառնալ ձեր անցած ճամբուն, զգացէք անոր առաւելութիւնները ու խոստովանեցէք անոր բարեբար աղղեցութիւնը, վասն զի առանց այդ յիշատակներէն ծնելիք նոր ու կազմուող տպաւորութիւններուն, կեանքը կ'ընդունի թէ սանձանք մը կը դառնայ Այո՛, առանց Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը ունենալու, առանց Անոր Հոգիին ապրուած կեանք՝ կեանք չէ:

Ահա՛ արտաքին տպաւորութիւններու պէտքն ու օգուտը:

Արտաքին ապաւորութիւններու կամ թելադրութիւններու ամէնէն զօրաւորն է քրիստոնէութեան դադափարէն ծնածը, որուն նպատակն է բարձրացնել մարդկութիւնը առողջ բարոյականով մը, մաքրագործել զայն եւ տանիլ կատարելութեան սիւսարին. ու արդէն, քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ Քրիստոսի հետ կապուիլ ներքին կապերով, Անոր մէջ ու Անով ապրիլ. եւ երբ մենք կրցած ենք հոգեւին կապուիլ Անոր, ապահովել Անոր ընկերութիւնն ու սէրը, ալ ինչէն կը վստահանք եւ ո՞վ կրնայ հակառակիլ մեզի. վասն զի «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ»:

Բ.— Բայց ինչպէ՞ս կրնանք վայելել Աստուծոյ ընկերութիւնը. անշուշտ մեր վրայ դրուած պարտականութիւնները ճանչնալով եւ լիապէս կատարելով զանոնք, Հարկ չկայ մեր տկարութիւնն առարկել եւ կարծել թէ երբ լիովին չենք կրնար կատարել զանոնք՝ կը զրկուինք Աստուծոյ ընկերութենէն. կը հաւատանք թէ Ան խոտապահանջ չէ անկարելիին առջեւ ու կ'ընգռնի սրտով մատուցուած ամէն զոհաբերութիւն. մեր կարողութենէն աւելին չի պահանջեր մեզմէ. Արդ, ամէն քրիստոնեայ կարող է իր ընդունակութիւններուն չափով օգտակար ըլլալ Աւետարանի գործին ու կատարել տառքինական զործեր. ու դուք ամէնքդ, ձեր կեանքի ընթացքին կարողացած էք յաճախ կատարել ձեր պարտքերը. այո՛, յաճախ բայց ո՛չ միշտ, քանի որ մեր արամադրութիւնները, տեսանք թէ շարունակ նոյնը չեն կրնար մնալ:

Ահա հարցը ուր կ'ուզուի կեցողական մեր բոլոր ուշադրութիւնը:

Մարդուն մէջ ամէնէն ազնիւ տարրը ինքնագիտակցութիւնն է, ասով անհատը կարող կ'ըլլայ անցեալի փորձերով եւ պատմութեան աղբիւրէն քաղուած դասերով կազմել ապագայ ապրելակերպի մը ծրագիրը. լաւագոյնին ձեւերու տնայնաբը մարդուն մէջ բնածին է, ու ան պարտաւոր է ուշադիր ըլլալ այդ հակումը հետզհետէ զօրացնելու իր մէջ. ճանչցուած

սխալներու կրկնութիւնով մարդը կ'իյնայ իր աստուածայնութենէն, ու քրիստոնէութիւնը, գերազանցապէս կատարելագործումի կրօնք, կը պահանջէ իր հետեւողներէն՝ կամք աւելի կատարելութեան հասնելու: Քրիստոնեան պէտք է իրեն օրինակ ունենայ իր հետեւած կրօնքի Հիմնադրին ամենաբարձր նկարագիրը եւ շարունակ ձկտի անոր, իր գործերով, իր գաղափարներով, իր կեանքով. «Եղբրեք կատարեալք, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»:

Ուրեմն, կատարելատիպին, իսկականին հասնելու ձկտումը ամենազխտաւոր պայման է քրիստոնեային համար. մարդը պէտք է աստուածայն կիթէ ճշմարիտ քրիստոնեայ է ան. վասն զի «Աստուած մարդացաւ, որպէս զի մարդը աստուածանայ» (Որդիքնէս): Ահա մեր գործը, ամենքնիս ալ պարտական ենք մեր զբաղած պատասխանատուութեան գործին մէջ բերել մեր արդիւնքները հաւատարմաց բարիքին համար, ամենքնիս ալ հաւատար բաժին ունինք կրօնական բարոյական պարտքերու կալուածին մէջ: Աստուծոյ արդարութեան առջեւ ընկերական աշխարհի ստեղծած խտրութիւնները, տարիւմտի, դիրքի զանազանութիւնները բան մը չեն արժեր: Արդարութեան այդ ատեանին առջեւ ամէն մարդ հաւասար է բացարձակապէս, վարձքի ու պատիժի տարիւմտներ չկան հոն, ու անոնք երբէք չեն չափուիր ընկերական գիւրքերու պէս-պիտակութեան վրայ. ոսոճի երկրի իշխանութիւններն ստեղծած են ու երկար պիտի չապրին: Վարձատրութիւնները կը չափուին արդարութեան նժարին մէջ, համեմատաւոր գիտակցութեան զոր դուն կը դնես գործերուդ մէջ՝ ուղղութիւն եւ նորատակ ունենալով ճշմարտութիւնը, եւ ա՛յն հաւատարմութեան՝ որով ուրիշ մը կը վերաբերուի գէտ իր կրօնն ու բարոյական պարտականութիւններու կատարումը:

Գ.— Իբրեւ քրիստոնեաներ չափած եւ ստուգած ենք Քրիստոսի մեղ հանդէպ տաճած սէրը, եւ կը զգանք անոր սիրոյն անհամեմատ մեծութիւնը: Իբրեւ մարդ, ուսումնասիրած, ճանչցած ենք աշխարհն

ու մարդկութիւնը իր անէն մէկ լաւ եւ յոռի կողմերով՝ Վե'ր անունը հիմայ մեր աչքերը ամէն տեսակ անձնատէր նկատումներէ, եւ ճշմարտախղիւր սղիով զիտենք իրերը, թո'ղ մեծ չերեւի մեր աչքին այն չնչին զոհողութիւնը, զոր Յիսուս կը պահանջէ մեզմէ իր սիրոյն համար, իր արիւնին փոխարէն մեր երջանկութեան սիրոյն փութանք զոհաճնել զինքը եւ մաքրել մեր ներքին աշխարհը, ա'լ աւելի զարգանալու, կատարելագործուելու եւ իրեն հասնելու համար Զանաթ սպառնովք մեզ համար իր ընկերութիւնը, իր սէրը. այդ սիրով կանխեցաւ Աւետարանի դեղաչէն կոթողը, անոր վրայ եկեղեցիին հիմքը կը դնեն իրենց հաստատութիւնը, մեր յոյսերը հո'ն կը հանգչին, անով կ'ողեւորուինք մեր ազգային գոյութեան սպառնացող փոթորիկներու դէմ կռուելու համար, ու մեր լքումի ահաւոր վայրկեաններուն հո'ն միայն կրնանք գտնել մեր սիրտերու սիրտիւնքը:

Եթէ այսքան ընտանի է մեզի Աստուծոյ սէրն ու ընկերութիւնը, եթէ այսքան չնչին փոխարէնով մեր մեր պարտականութիւնը ճանչնալ եւ կատարելու բարութիւնը ունենալով կարող կ'ըլլանք վճարել իր անփոխարինելի երախտիքը եւ մտնել իր ընկերութեան մէջ՝ ալ ինչպէս կ'ուշանանք . . . :

Ուրիմն.

Յորչափ կ'ապրինք Հայ-քրիստոնեայի պայմաններուն տակ, աշխարհի տիրապետող ուժը պիտի կաշկանդէ մեր բազուկները, մեր մարմինները անարգարութեան լուծին տակ պիտի հիւժին, բայց մենք մեր վիշակութուն մէջ պիտի երգենք. «Տէր է իմ օգնական, զի՞ արտայէ ինձ մարդ»։ Անբաւեր պիտի կողոպտեն մեր քրտինքի արդար վարձքը ու անօթութեան բեռին տակ պիտի կքին մեր քամակները, իսկ մենք մեր տաքնաօլի զայրագնումներուն տակ անյողգող պիտի կրկնենք. «Արդարութիւն Տեառն միայ յաւիտեան»։ Թուլամորթներ պիտի չլծապատեն մեզ մեր տառապանքին մէջ, ու հանգիստ ապրելու միջոց՝ կեղծիքը պիտի ցուցնեն մեզի,

մենք պիտի արգահատինք անոնց վրայ ու պատասխանենք. «Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ . . . յիշատիս»։ Բռնաւորներ պիտի ծանրանան մեր վրայ՝ մղձաւանջի տագնապներու մատնելով մեզ, պիտի ծաղրեն տառապանքը, պիտի հալածեն արգարութիւնը, պիտի չղթայեն ճշմարտութիւնը, եւ իրենց աւերակոյտերուն վրայ պիտի հաստատեն իրենց գահերը, պիտի չարչարեն մեզ ու արգարութեան անկրաւ մահացումին համար արձակած մեր ճիչերը՝ ապստամբութեան յայտարարութիւն պիտի հրատարակեն աշխարհին. բայց մենք, եթէ սպառած գանկէք մեր միջոցները, պիտի վճենք թագաւոր-մարգարէին հետ. «Դատաստան Տեառն միայ յաւիտեան»։ Ու բնութիւնը՝ ահագնօրէն սպառազէն՝ պիտի կանգնի անիրաւութեան դէմ, երկինք պիտի դռայ բարկաճայթ, ու իր շանթերը պիտի մխէ անբարտաւանդութեան գանկին մէջ, երկիրը պիտի սարսի արեւին դէմ գործուած նախճիրներուն տակ ու ընկուղէ բռնաւորներու ոսկորները, իսկ մենք՝ «հալածեալ այլ ոչ լքեալ»՝ պիտի զիտենք այդ բոլոր աղէտներն ու աւեր, եւ Պօղոսի հետ պիտի դռանք կոկորդալիւր. «Ե'թէ Աստուած ի մեր կոյս է, ո'վ իցէ մեր հակառակ»։ Ու տղաւորանած Անոր արդարութեան՝ պիտի աշխատինք մեր պատիւովը լրացնել ինչ որ ժամանակն ու աղէտներ խլած են մեզմէ, եւ միշտ ունենալով մեզ միակ ընկեր Աստուծոյ սէրն ու պաշտպանութիւնը, պիտի փառաւորենք ու օրհնենք իր Անունը. Ամէն:

ԳԵՂԱՄ

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՑՈՒՆՔ

Արցունքի բխրեղացած շիւե-րուն մէջէն քաղցի իր վշտալից կեանքին պատմութիւնը:

ԼԱՍԱՐԹԻՆ

Կեանքի ամենի ալիքներուն վրայ եմ հիմա, ու անոնց քմայքին ենթակայ իրենց հանդարտութեան հետ, ես ալ ժամանակաւոր հանդարտութեան մը անոյշ

պատարանքը կ'ունենան մե Եւ ահա՛ սաստիկ փոթորիկէ մը կ'ուռնի անոնց լանջքը . կը գալարուին թուռնալից իծի մը նման, բաղ- խումներ կ'ունենան որոտընդոտա . կը փը- քանան ու կը սլալթին , կը Փշտն ու կը շառաչեն . ու ես այդ կատաղի ու լսրծուն տարրերուն վրայ տարուբեր , ահամայ կը զգնուեմ խարակներու սրածայր, ժայռե- րու բրգածեւ ու սալերու հաստապինդ ...

Ահ , կեանքի կոխ , պարտականու- թեան պայքար :

Բայց ա՛յս էր կեանքը . . . :

Ես կը յուսայի որ խաղաղութեան ուխ- տիս մ'ըլլար ան , պճնուած անուշաբոյր մեխակներով , ծաղիկներով ինկաբոյր եւ վարդերով գոյնզգոյն , ուր պիտի բմբռնի- նէի կեանքը առանց հոգեկան պուտ մը վիշտ զգալու անպամ :

Ես կը կարծէի որ այդ եղեմակին վայրին մէջ կը անտապեալ արդարութիւ- նը , եղբայրութիւնն եւ հաւասարութիւնը , այնպէս որ այդ երրորդութեան ազդեցու- թեան տակ չպիտի ուզէի որ աննշան շըն- չաւոր արարած մ'իսկ ոչնչանար , եւ ան- տարբեր չպիտի մնայի բնաւ , երբ արիւ- նոտած եւ փռեկառած տեսնէի՝ փափուկ եւ զգայնիկ սիրտ-կոկոնները վարդ ծա- ղիկներուն :

Ես կ'երեւակայէի որ այդ վեհ բնու- թեան մէջ պիտի խալտար հոգիս երկնային գեղեցկութիւններով , պիտի հանգարաւթր սիրտս արդարութեան իրազործումով , եւ իմ ամբողջ էութիւնս այդ վսեմ բնութե- նէն արտաշնչուած մեղմ գեփեւոտով ու թարմ սիւքով պիտի փայփայտէր ու զո- վանար յաւէտ :

Ես կը խորհէի որ այդ զգլխիչ կեանք- համատարածութիւնը , իր ալլազան եւ հի- անալիօրէն կիսուած անկարգած տեսա- րաններով , հետի պիտի վանէր ինձմէ ձանձրոյթի դժպնի գէմքը , եւ յախտնա- կան հրապոյրով մը պիտի թովէր հոգիս :

Ի՞նչ հակամեծութիւն սակայն , եւ ի՞նչ պատարանք : Հոգեցունց յուսախաբութեան մը ենթարկուելու կը զգամ : Կեանքն ունի եղեր իր աղաղակներն ու ցուերը , ողբերն ու կոծերը , վիշտերն ու արցունքները ,

մանաւանդ արցունքները , որոնք անբա- ժանելի միութիւն մը կը կազմեն եզեր կեանքին հետ : Վեհապի՛ փիլիսոփաներ ... անոնցմէ ոմանք խոտի նմանցուցին կեան- քը , ոմանք ստուերի , ոմանք քիմիական ցնդող բազադրութեան մը , ոմանք ունայ- նութիւն միայն տեսան անոր մէջ , եւ ոմանք ծաղիկ մը միայն : Իսկ ես կեանք կոչուած լացի ձորին մէջ առած առաջին քայլերուս իսկ արցունքնէր միայն նշմա- րեցի . . . :

Սոսկալի՛ հանդիպում , ցնցո՛ղ յայտ- նութիւն . . . :

Այո՛ , խոտ , ստուեր , ծաղիկ եւ ունայ- նութիւն բառերով որակուած կեանքը , աւելի լայնորոշուած կ'ըլլայ , երբ արցուն- քով յատկանշեալ վայն : Կեանքը ար- ցունք մըն է իսկապէս , ուրիշ ոչինչ : Չկայ մեր երեւակայած կեանքը , չկայ ու կարելի չէ գտնել այդ ժամանակաւոր շըր- ջանին մէջ վճիռը երկնքին , պայծառու- թիւնը ասաղերուն , ոսկեշող ճաճանչը ա- բեղակին , յուսադրիչ տեսքը ծիածանին , աղամանդեայ ցոլքերը լուսնին , հոգեթով մեղեդիները թռչնիկին , մեղանոյշ գեղգե- ղանքը սոխակին , ծիծաղկոտ ծփանքը ծո- վուն , յուսացուած ներդաշնակութիւնը վեհ բնութեան , եւ կարծուած տիրապե- տումը արդարութեան , եղբայրութեան եւ հաւասարութեան :

Կեանք . . . ո՛ւր է հոն խինդ ու ծի- ծաղ , փառք ու յարգ , յոյզ ու յոյս : Ար- ցունք է կեանքը . հոն լլկում ու լքում կայ միայն , հո՛ն արցունք կայ միայն : Ահ , արցունք , որ կը յուզեա ծովուն խո- բերը , կը յուզեա սրտիս անդունդները ...

Կեանք եւ արցունք , այլ եւս հոմա- նիչ բառեր են ինծի համար , իրար կ'ամ- բողջացնեն անոնք . մին ոչինչ կ'արժէ ա- ռանց միւսին : Արցունքը կեանք կ'արտա- զրէ եւ կեանքը արցունք : Արդեօք ար- ցունքն ալ չունի՞ իր պատմութիւնը : Ահ , ի՞նչ աղետ պիտի ըլլար եթէ արցունքին ալ պատմութիւնը գրուէր : Բայց ի՞նչ կ'ը- սեմ , արդէն կեանքին պատմութիւնը ար-

յունքն է, արյունքին պատմութիւնը կեանքը . . .

Այլ ընտելացած ու համադրւած եւ այս գաղափարին՝ Արդեօք ասոր համար է որ զունատ ու ախուր գէմքերն աւելի կը սիրեմք քան զուարթն ու ոսկեզօծ ժպիտովը՝ Ո՛րքան ախուր, բայց միանգամայն տեւական ու քաղցր տպաւորութիւն մը կը թողուն վրաս այն արտեւանունքները, որոնք արյունքներու ազամանդանման շիթերով քոնաւորուած են շարունակ . . .

Վիշաէ եւ արյունքէ հասկցողի մը հաւատքով քննէ այդ բիրեղացած կաթիլները, ու պիտի տեսնես որ անոնք կեանքի ակերէն հոսած են։ Մանրակրկիտ ուսումնասիրութենէ մը անցուր, ու պիտի տեսնես որ անոնք ամէնքն ալ իրենց սիրտ բզբառով պատմութիւնն ունին։ Ինչե՛ր, ինչե՛ր պիտի խօսին անոնք քեզի, եւ որքան բազմաթիւ ու այլազան պատճառներով հոսած ու բիրեղացած են այդ ջինջ կաթիլները արցունքի՝ Կսկծեցուցիչ մահուան արցունք, անողոք հիւանդութեան արցունք, անտանելի վիշտերու արցունք, հոգեկան ներքին յուզումներու արցունք, գծազգութիւններու արցունք, բաժանումի եւ հոգեմտչ սպասումի արցունք . . .

Այս վիշտերուն ենթակայ եղողները միայն կրնան թափանցիլ կեանքի գոյութեան ու գաղանթին, անոնց համար միւխթարութիւն մըն է իրենց թափած արցունքը, սիրտանք մը՝ որով հանգարտած կը կարծեն պահ մը իրենց չարչրկուած կեանքը։ Անոնց համար այդ գաճաճու կաթիլներէն աւելի մտերիմ մէկը չի կայ, եւ սոսկ այդ մտերիմն է որ իբր թէ փրկարար գերը կը կատարէ իրենց աղեկոծ վիճակին մէջ, եւ շարունակական յարութեամբ կը խօսի անոնց սրտին, մըտքին ու բովանդակ էութեանը հետ . . .

Արեւնոտ, վիրաւոր սրտերուն համար գերազանց երջանկութիւնը լացն է, արցունքն է. անով միայն կ'արժէ ու կարելի է ապրիլ այդ թախծոտ երջանկութիւնը պարգեւող կեանքը։ Եւ արդէն կեանքն արցունք ու լաց չէ՛ր միթէ . . .

Ուրեմն, ի գո՛ւր չեն որ կը թափուին

այդ արցունքները. կեանքին էութիւնը կը բացորոշեն անոնք. թո՛ղ զրուի ուրեմն այդ « բիրեղացած շիթերուն պատմութիւնը », ու մենք անոնց « մէջէն պիտի քաղենք վշտալից կեանքերու պատմութիւնը . . . »

ՍՈՒՐԷՆ Ն. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

Բաղէշ

ԲԱՆԱՆՆԵՐ ԹՈՇԱԿԱՒՈՐ

ՊԵՏԷ Ե ԼԼԼԱՆ

Տաճարի 34 թիւին մէջ « Հոգեւոր եւ բարոյական զարգացումի վիճակ » եւ « Հայ Բանաստեղծներ » վերագրելով՝ Հայէպէն Արժ. Տ. Յր. քննյ. Ետայեանի եւ Տէնէք Մառնէն՝ Արժ. Տ. Յովհ. քննյ. Կէվէրեանի՝ ստորագրութիւնները կրող երկու տարբեր՝ յուզիչ եւ արտաճմիկ գրութիւններու համար, խմբագրութեան կողմէ, առաջնոյն համար՝ « Ի՞նչ պիտի կրնայ ընել քահանայական միութիւնը առանց ժողովրդային տաք վերաբերումի եւ հնչուն օժանդակութեան » եւ երկրորդին համար ալ՝ « . . . Թէեւ համամիտ չըլլանք իր եղբակցութեան՝ քահանաներուն տմաւթոյակ յատկացուելու մասին . . . » ըսուած է։ Մենք չկրցինք ըմբռնել Տաճարի խմբագիր Հոգեւոր Տ. Հօր սոյն գիտողութիւնները։ Արդէն բուն խնդիրը քահանայական թոշակի շուրջը կը դառնայ թէ՛ Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետին նշանաւոր կոչը, եւ թէ՛ Արժ. Տ. Հարց գրութիւնները նոյնը կը մասնանշեն . . .

Ն. Ս. Օծութեան կոչին չմէջ բացատրուած է արդէն գիւղերը զրկուող քահանաներու ամսաթոշակի համար նուազ խնդրուիլը . . .

Արդարեւ շատ զարմանալի են արդի Հայ ժողովրդեան եւ Հայ քահանաներու իրարու հանգէտ տածած խուլ հակակրօթիւնները։ Ժողովուրդը շատ իրաւացիօրէն կը դանդաճի եւ կը պահանջէ որ՝ Աստուծոյ տան պաշտօնեաները ամէն բա-

մասնութիւններով օժտուած ըլլան, եւ ի հարկին, մանաւանդ զիւղերու մէջ, ըլլան նաեւ քարոզիչ, զրագէտ, իրաւագէտ — փաստարան, բժիշկ, եւն. եւն., իսկ քահանաներու պահանջը կամ խնդիրքը միմիայն մէկ բան է. իրենց օգրուածի ապահովումը Արք. քանի որ թէ՛ ժողովրդի եւ թէ՛ քահանաներու պահանջներուն գոհացում չէ տրուած, դանդաւաները միշտ պիտի մնան դանդաւ, եւ կարող քահանաներու թիւը՝ առանց յաջորդող ունենալու՝ պիտի պակսի, եւ ժողովուրդը անկարող քահանաներու երեսէն պիտի ուժանայ Եկեղեցիէն ու այսպիսով վերջ կը գտնէ ամէն բան:

Առ այս կը խնդրուի Տաճարի ընթերցողներէ որ քահանայական «ամսաթոշակի» կամ «նպաստընկալի» զրուծիւններու օգտակարութեանը ասթիւ հաճին պարզել իրենց տեսութիւնները:

ԽԱՉԱՏԱՌԻ ՔՀ. ՊՕՂԻԿԵԱՆ

Հայկա

Խմբագրութիւն «Տաճար», ի

Քահանայական ցաւին վրայ — երեւոյթն ու բարոյական — Սերմիս տնօրէն-խմբագիրը ունի իր որով կարծիքները, զորս պիտի սկսի պարզել մեր-ձաւոր Թուով մը, բացատրելով թէ ինչո՞ւ համար չէ քահանաներուն Թողակ յատկացուելուն, ընդունելով իսկ անոնց ստուար մեծամասնութեան նիւթալան ծայր տատիկան արգանտակի վիճակը (մէկ-դի Թողով խմբականն ու բարոյականը), — եւ թէ ի՞նչ միջոցով կարելի կը նկատէ դարձան տանիլ այդ տխուր կացութեան:

Տպագրութիւն Ներկայ Թիւին Հոգեւոր Կեանքի քաղցր, մասնաւոր հաճոյքով մի յատկացուցինք նոր աշխատակիցի մը, Գեոր. Տ. ՍԱՀԱՐԻ Գ. ՕՏԱՊԱՇԱՆԻ, որու Ներկայ գրութիւնը զրկուած է ի մասնակցութիւն ողբացեալ Թաւ-շանճեան Է. Գ. ի բացած քարոզի մրցումին Կեդրոն ժամկանուամբ, եւ 100 Ժր. միջանակի արժանի դատուած, սակայն նոյն ժամանակի բռնապետական կառավարութեան ամենախիստ գրաքննութեան պատճառով կարելի եղած չէր անցընել նոյն մրցումին արդիւնքով հրատարակուած Փոքր Բարոզգիւրքին մէջ: Եւ դիւրահասկնալ էր պզդ, քանի որ Ներկայ քարոզի քրիստոնէական լայն շունչով մի գրուած՝ հաւատացեալը սրտագին ոլորտական մը չղբալան հետ մէկտեղ, հոժկութեամբ մըն է բնականութեան դէմ, եւ իրը այն մասնաւոր ուշադրութեան առարկայ եղած՝ երբ բնականացի կը խօսուէր Բերքայի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ բնէն:

Կեդր. վարժարանի կրօնաւարդ՝ Գեոր. Տ. Սահակ Գ. Վ. պիտի հաճի մերձ ընդ մերձ զարգարիլ Տաճարի էջերը իր նմանորինակ գեղեցիկ գրութիւններով:

«ՏԱՃԱՐ», Ի ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սօֆիայէն Արժ. Տ. Մեսրոպ ֆանց.

Տ. Մեսրոպեան հետեւեալ հարցումները կ'ուղղեմ ձեզի. —

Ա. — Հայ աղջիկ մը՝ Պուլկար Եկեղեցւոյ ծէսով Պուլկարի մը հետ պատկուած եւ քիչ ժամանակ կենակցելով ամուսինէն զատուած, եւ բաւական ժամանակ զատ ապրելէ յետոյ, ուրիշ Պուլկարի մը հետ նորէն Պուլկար Եկեղեցւոյ ծէսով պսակուած է եւ ցարգ կ'ապրի: Այժմ տաղթն ամուսինը մնում ըլլալով՝ յիշեալ կինը Ս. Հաղորդութիւն ապա ներելի՞ է թէ ոչ:

Բ. — Երախայի մը մկրտութեան ժամանակ, երախային հարազատ եղբայրը եւ կամ հօրը հայրը կնքաճար կ'ընայ ըլլալ:

Գ. — Թուրքիոյ քաղաքներէն միոյն բնակիչներէն Հայ մը՝ իբրեւ օրէնք կ'առարկէ թէ առանի մը մէջ անկնունք երեխայ դնուած միջոցին, միեւնոյն տան մէջ եթէ ննջեցեալ մը պատահի, նախ պէտք է երախան մկրտել եւ ետքը նընջեցեալը վերջին: Առանց երախան մկրտելու մեռելը վերջինը անկարելի է, կ'ըսէ, այսպիսի եկեղեցական օրէնք մը ունի՞նք, եւ եթէ այո՛, պատճառն ի՞նչ է:

Խմբագրութիւն «Տաճար», ի

Ա. հարցման ի պատասխան մեր կարծիքն է թէ պէտք է զգուշանալ այդ կնոջ Ս. Հաղորդութիւն ապա, քանի որ երկիցս Պուլկար Եկեղեցւոյ ծէսով պսակուած է Պուլկարի մը հետ, եւ հետեւաբար նոյն Եկեղեցւոյ զատաւորութիւնն ընդունած է պաշտօնապէս: Ուստի պէտք է յանձնարարել նոյն կնոջ որ Պուլկարեական Եկեղեցիէն զիմէ հաղորդուելու համար: Այդ յանձնարարութիւնը պէտք է ընել, մօնաւանդ սնորհ համար որ այդ կնոջ առաջին ամուսինէն բաժնուելը, եւ երկրորդ պսակով մը պսակուելը չղբալանք թէ ո՞րքան օրինաւոր պայմաններու մէջ տեղի տեղի ունեցած են. այդ տեսակէտով ալ միայն Պուլկար Եկեղեցւոյ հոգեւոր պաշ-

տոնեան կրնայ գիտակցորէն որոշում տալ:

Բ. Մկրտութեան ժամանակ կնքանայ-
րին ազգականական կապ չունենալը թէեւ
պարտադրուած է կանոնով, այսուհանդերձ
այդ պարտադրութեան չի հետեւելը ա-
մէն ժամանակ տառապէս, եւ հարկեցու-
ցիչ պարտազանեռու տակ երախային մեր-
ձաւորները իրր կնքանայր ընդունուած են
սովորաբար. այսու հանգերձ շուագոյն է
անշուշտ եկեղեցական կանոնի անխախտ
գործադրման հետամուտ ըլլալ, երբ անկա-
րելիութիւն չկայ:

Գ. Դեռ չմկրտուած երախայ մը զրու-
նուած առնել ննջեցեալ պատահելու պա-
րագային նախ երախան մկրտելու եւ ապա
ննջեցեալը վերցնելու մասին եկեղեցական
ո եւ է կանոն կամ օրէնք չկայ: Ժողո-
վրդային խաւերու մէջ տարածուած կար-
ծիք մըն է այդ, որուն շարժառիթը պէտք
է փնտել նախապաշարումի մէջ, Այսու-
հանգերձ երբ ննջեցեալի տէրը պնդէ երե-
կան մկրտել՝ մեռելը վերցնելէ առաջ, —
եկեղեցական կանոն մը չգտնուիլը յիշե-
լով եւ այդ սխալ կարծիքը փարատել
աշխատելով հանդերձ, — անպատեհութիւն
մըն ալ չենք տեսներ յայտնուած փափա-
քը կատարելուն մէջ, քանի որ մկրտու-
թիւնը առաջ կամ ետքը կատարելով օ-
րէնքի հակառակ բան մը ըրած չենք ըլ-
լար:

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Ե Փ Ր Ե Մ

Ս. (1)

Հին կտակարանի մեկնութեան չափ
արժէքաւոր է նաեւ Նօր Կտակարանի «Հա-
մաբարբառը» (diatessaron)՝ արգիւնք Եփ-
րեմի գեղեցիկ գրչին, որ միանգամայն
մաս կը կազմէ Հին Կտակարանի մեկնու-
թեան, եւ չորս ստուար հատորներու մէջ
ամփոփուած՝ 1836ին հրատարակուած է

(1) Շար. 34րդ. Թիւէն:

Վենետիկի Մխիթարեան Հարց ջանքով
ու աշխատութեամբը:

Մինչեւ հիմա գէթ այս էր տիրող կար-
ծիքը, եւ ո եւ է կասկած չկար թէ Եփ-
րեմ իր այս գործին մէջ օգտուած ըլլայ
տարբեր աղբիւրէ մը, որ իրմէ առաջ ար-
դէն կը գործածուէր Ասորական մատենա-
գրութեան մէջ, այն էր Թադէուսան հա-
մարարար (Tatians diatessaron), Արքի-
քննաշատութիւնը չվարանցաւ համար-
ձակութեամբ յայտարարելու թէ Եփրեմ
ոչ թէ օգտուած է այդ Համաբարբառէն,
այլ այդ անվուեր (apocryphe) գործը ժա-
մանակ մ'ալ իրեն անունով գործածուած
է Ասորոց քով, ինչպէս կ'ստուգէ Հ. Յ.
Տաշեան, ըսելով. «Ա. Եփրեմի մեկնաբա-
նած Համաբարբառն որ միայն հայերէն
Թարգմանութեամբ պահուած է, նոյն իսկ
«Տաթիանու» անունը կրող Համաբարբառն
է, ինչպէս ցուցուց Յան (Zahn) Գերմա-
նացի գիտնականն, եւ այս Համաբարբառը
չաւ տեղեր Ասորական եկեղեցւոյ մի միակ
Աւետարանն էր, նաեւ Արեւմտեան Ասոր-
ոց քով, ինչպէս կը վկայէ Ս. Եփրեմի
մեկնութիւն գրելը» (հմտ. Հ. Ամսթերայ
1893 էջ 69), Բայց Ե. դարէն սկսեալ
ստուգուելով այս Համաբարբառին կեղծ
յօրինուածքը, բոլորովին արգիւնցաւ ա-
նոր գործածութիւնը Ասորի եկեղեցական
իշխանութիւնէն եւ անոր մնացորդ օրինակ-
ներն ալ իսպառ փծայան:

Եթէ Ասորական օրինակները ջնջուե-
ցան, սակայն Հայկական Թարգմանութիւնը
պահեց իր գոյութիւնը մինչեւ հիմա, եւ
այս Թարգմանութիւնէն միայն գիտեն եւ-
րոպացի գիտունք թէ Եփրեմ հեղինակ է
այսպիսի գործի մը, ինչպէս կը հաստատէ
Տիւվալ:

Մեր առաջին Թարգմանիչը աստից բա-
նաքննական հետազոտութեան Եփրեմի
գրչէն ելած իբրեւ վաւերական գործ մը
համարելով, չեն քաշուած յոգնաջան աշ-
խատութեամբ մը հայացնելու զոյն, որ
Ոսկեդարէն յետոյ մինչեւ Արծաթի Դար
պահած է նոյն կախարհիչ հմայքը հայկա-
կան մատենագրութեան մէջ (1), արժանա-

(1) ԺԱ. Դարուն Գրիգոր Վկայասէրի կարգա-

նալով կրկնակի թարգմանութիւններու եւ գրչագրումներու, ինչպէս կը տեսնուի հետեւեալ յիշատակարանէն:

«Ի Սուականութեան Հայոց Ոսի ից (1195) յանկ եղեալ կատարեցաւ Աստուածաբն իմաստութիւն Սրբոյ հաւրն Եփրեմի մեկնութիւն Աւետարանի համաբարբառ, եւս եւ ճառք հոգեպատմութեան շարակարգեալ ի շահ աւգտութեան մանկանց եկեղեցւոյ: Ընդ որս հայեցեալ ի բազմաբեր բարեւոյն ի սմա ամբարեալ պտուղս, եւ որպէս աւանդ հայրենի յաղազս որդւոց յառաջադահեստ արարեալ գանձեալ եւ եղեալ սուրբ եւ արդիւնակատար վարդապետ ոմն Սեանիա. ժառանգողաց տանս Հաղբատայ, ի լուստորութիւն հանուրց աշխարհի:

«Արդ ես խաչատուր այր ոմն անտոնիկ. Եփրեմիական եւ աղբատ սուտ անուն արեղալ դիմեալ ի հրահանգս վարժ ից առ ոսո իմաստուն եւ սրբասնեալ վարդապետաց, գրեալ ապա իմ գայս Աստուածատուր գանձարանս առ մեծարգի եւ իմաստուն վարդապետին իմոյ Դաւթի, եւ խնդրեալ շարագրեցի անարուեստ եւ անվարժ գրով, զի սէր վախարանացս ստիպեալ հարկեցոյց զիս եւ կարիսս առուել յորդորեաց. մանաւանդ համբաւ իմաստիցն Եփրեմի որ ոչ միայն ինձ այլ եւ ամենեցուն է ցանկալի առաջնոցն եւ վերջնաց եւ որ այժմս են:

«Գրեցաւ գիրքս այս ի գաւառիս Ձորոյ գետ ի վանս Հաղբատ, ընդ հովանեաւ սուրբ եւ կենարար եւ մաւրն լուսոյ Կաթողիկէի եւ ամենայն որ ի նմա սուրբք իցեն. յեպիտոկոստութեան տեառն Յովնաննէսի ի մահուան տեառն Գրիգորի Հայոց Կաթողիկոսի(1), ի վարդապետութեան Պետրոսի, Դաւթի եւ իզնատոտի, եւ զկնի մահուան վարդանայ վարդապետի, յորում ամի գրեալ ի վերայ գաւառն Կար. նոյ եւ վանաւարացն, յաւերումն եւ ի գերութիւն մատնեցան: Յայսմ ամի ես խաչատուր ակարացեալ եւ խելայեղեալ գրեցի զգիրս գայս խոշոր եւ անյարմար յաւպիտան նիւթի. եւ արդ յերեսս անկեալ տղաչեմ չլինիլ մեղադիր, այլ յիշել սրտի մտաւր եւ ցաւակցարար զիս եւ զվարդապետն իմ Դաւթի եւ որ զաւրինակս ջնորհաց, եւ զծնողս իմ եւ զեղբարս (ճմատ. մատենդր. հայկ. հին Թարգմ. էջ 447):

Չանց ընելով դեռ բազմաթիւ յիշատակարաններ, որոնց ամէնքն ալ կը հաստատուն թէ Ոսկեդարէն յետոյ մինչեւ Արծածաթի Դար Եփրեմի մասնեղագրութիւնը մեր Նախնեաց գրչին եւ ուղագրութեան առարկայ դարձած են. պէտք է ըսել թէ ԺԴ. Դարուն սկիզբը նոյն խնդրաւորս:

գրութեամբ Գէորգ Ուսեցի կամ Քիտունցի ըսուած հմուտ վարդապետ Եփրեմի քանի մը գործերը Հայրենի դարձուցած է (տես Մատենդր. Հայկ. հին Թարգմ. էջ 443: Հմտ. Պատմ. Հայկ. հին դար. էջ էջ 766, Մ. Ուսեցի էջ 295):

(1) Գրիգոր Դ. Տղայ որ գահակալեց 1173-1195:

գրչի մը կողմէ լեզուական փոփոխութիւն մը կրած է Եփրեմի մասնեղագրութիւնը, որ ընդօրինակած է զայն ի Թուին ՁԽԸ (1299), եւ այդ ընդօրինակութեան վրայէն կատարած են վերահաւան Մխիթարեան Հարք արդի տպագրութիւնը (տես Մատենագր. Եփրեմի հատ. Ա. յառաջար. Ե. 6): Թէ այս լեզուի փոփոխութիւնը ինչպէս նշմարուած է, Նորայր Բիւզանդացի կըրցած է ճշգրիտ օրինակով մը հաստատել զայն. զոր օր. «Ողբ րեկաւ Ախառն»: Նորայր կ'ըսէ թէ Եփրեմի թագմանինչն առաջին կէս Ե. րդ Դարուն «Բեկեցաւ» գրած պիտի ըլլայ, մինչդեռ «Բեկաւ» ժ. Բ. դարու աւամիջօրէն բառ մ'է. եւ մէջ կը բերէ ԺԲ. Դարու աղգային պատմիչէ մ'տունուած սա նախապատմութիւնը. «Եւ տեսեալ իյաչիկ Բեկաւ ողն նորա եւ անկաւ սուսերն ի ձեռաց նորայ» (Տես Մ. Ուսեցի էջ 106, Հմտ. Կորիւն վ. եւ նորին թարգմ. էջ 86 ծան 1):

Ինչպէս տեսանք, Նորայրի դասաւորած ցանկին չորրորդն էր՝ «Նորին մեկնութիւնը չորեքտասան թղթոցն Պաւղոսի, բացի թղթոյն առ Փիլիմոն. չորեքտասաներորդն է Գ. Կորնթացեաց թուղթը որ եւրոպացի շատ մը դիտուններու ուղագրութեան առարկայ դարձած է:

Եւ որովհետեւ գիտենք թէ ոչ մէկ եկեղեցի ընդունած է այսօր Գ. Կորնթացեաց թուղթի մը պոյութիւնը. ինչպէս նաեւ անոր մեկնութիւնը, հետեւաբար Եփրեմի մասնեղագրութեան մէջ յիշատակուած Գ. Կորնթացեաց թղթոյն մեկնութիւնը ինքնին անվաւեր (apocryphe) գրութեան մըն է անծանօթ հեղինակէ մը, եւ հաւանաբար Ոսկեդարու մէջ Հայերէնի թարգմանուած՝ իբրեւ կանոնական մաս Նոր Կտակարանի:


Այս անվաւեր դրուածը առաջին անգամ 1644ին Եւրոպայի գիտական շրջանակներուն ծանօթացուցած է Ժապ Իւչէր(1) անուն Սնյովիացին՝ Չմիւռնիայէն Անգլիա գրկուած Թերի գրչագրի մը վրայէն ըրած թարգմանութեամբ. ապա բոլոր

(1) Ժապ Իւչէր, հմուտ բարձրաստիճան եկեղեցական մը որ ապրած է 1580-1656:

մնացիլը լատիներէն եւ յունարէն լեզուաւ հրատարակեցին Վիստոնեան եղբարք, որուն ձեռագիրը Հալէպէն ձեռք բերած էին: Ռինք ընդարձակ մենագրութեամբ (monographe) մը հրատարակեց զայն, օգնութեամբ Վենետիկի հմուտ Մխիթարեաններէն Հ. Յարութիւն Աւգերեանի. իսկ ամէնէն կատարեալն է ութը գրչագիրներէ բաղդատութեամբ եղած Գիրմաներէն հրատարակութիւնը, ուր շահեկան տեղեկութիւններ կը տրուին դեռ չհրատարակուած Հայերէն ձեռագիրներու վրայ:

Այս մեկնութիւնը Նոր Կաակարանի գրքերուն շարքին մէջ կը գտնուի, զատուորուած Յայտնութիւն Յովհաննուս գրքէն վերջ, Սիրաքայ. եզրի. Մանասէի աղօթքին եւ Հանգիստ երանելոյն Յովհաննուս զրուածքին մէջ(1): Հայ եկեղեցին եթէ ոչ կանոնական զրութեանց մէկուն, գէթ երկրորդական գրուածի մը պէս արժէք առած եւ յարգած է զայն, եւ անցնող դարերուն մէջ Հայ մատենագիրներ բաւական օգտուած են անկէ իրենց զրուածներուն մէջ, ինչպէս Թէոդորոս Քոթեհաւոր(2) (Է. դար) ընդդէմ Յովհան Մայրապոմեցւոյ գրած մէկ ճառին մէջ կը գործածէ զայն, համոզուած ըլլալով անոր վաւերականութեան(3): Թէ ո՛ւրիշ մասաւս անվաւեր զրութիւնը Հայոց կանոնական Ս. Գրոց ցանկին մէջ, կրնանք զիրար պատասխանը գտնել այս հարցման, կ'ըսէ Հ. Յ. Տաշեան: «Արդէն զիտենք թէ Հայ Մատենագրութիւնը մեծ ազդեցութիւն կըստ է Ասորական մատենագրութեանը. Բրիտանիոյ թանգարանի գրաքննիչը Երանան Ոսկեղար, ուր շատ մը ասորական

գրուածներ թարգմանուեցան հայերէն լեզուաւ Եղեւթոյ Պարսից Դպրոցին հետեւող Հայ ուսանողութեան կողմէ: Բայց յաւալի է ըսել թէ այդ թարգմանութիւններու բնագիրներուն շատը անվաւեր էր, ինչպէս «Վարդապետութիւն Առաքելոց» անուն կանոններու ժողովածոն(1), այս Կորնթացւոյ Գ. թուղթը եւ ուրիշ գրութիւններ: Պէտք է զարմանալ այս մասին որովհետեւ Ասորի եկեղեցականութեան մշակած սերտ յարաբերութիւնը Հայ եկեղեցւոյ հետ, նպատակ ունէր հեղինակաւոր ազդեցութիւն մը ներգործել անոր ներքին կազմակերպութեան եւ կրօնական մատենագրութեան վրայ: Քաղկեդոնի ժողովէն (451) վերջ այս յարաբերութիւնը աւելի եւս շեշտուեցաւ Ասորի եկեղեցւոյ կողմէ: որ ինքզինքը զաւանակից կը նկատէր Հայ եկեղեցւոյ ընդունած վարդապետութեան, եւ անա Բարձումա, Բարապէոս, Աբղիշոյ եւ ուրիշներ իրենց համառաւոր բրբաւ կանոններով մեծ փնտռելու հասցնեն Հայ եկեղեցւոյ եւ մատենագրութեան, որոնց վրայ գերակշիռ ազդեցութիւն մը կը պահէ Ասորի մատենագրութիւնը մինչեւ Միխայէլ Ասորի եւ Ապուլֆարաճ (ԺԲ. դար) եւ այս երկար ժամանակամիջոցը հետազօտող միտք մը դիւրաւ պիտի անհէ թէ չարանախանձ Ասորիներ ինչքան խարդախած ու ալլալած են Հայ մատենագրութիւնը(2): Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ



(1) Հայերէն թարգմանուած Ս. Գրոց անվաւեր մատերուն մէկ ցանկը առաջին անգամ Հայ մատենագրութեան ծանօթացուցած է Յովհաննէս Սարկուազ Վարդապետ, ապա Մխիթար Այրիվանեցի (ԺԳ. դար) աննկղով Կղեմէս Համայեցի (Ա. դար) կանոններէն (տես Hefel's concilien geschichte, Բ. արկ էջ 826):

(2) Այս այն Բաժնեաւորն է որ 1393ին Եզր Կաթողիկոսին հետ մատենացեցաւ Կարնոյ ժողովին եւ ընդունեց Քաղկեդոնի ժողովը (տես Պատմ. Հայկ. հին դար. էջ 767-768)

(3) Տես Թէոդորի ճառերը, Վենետիկ 1833:

(1) Տաշեան մատենաւոր ուսումնասիրութեամբ մը հրատարակած է այս գործը «Վարդապետութիւն Առաքելոց, Սուրբ Յակոբայ առ Կողրատոս եւ Կանոնք Թաղէի» խորագրով 1896ին անս. Ազգ. մատենադր. Թիւ 20 Վիէննա:

(2) Վերջերս Գաղղիացի հրատարակիչ մը՝ Մ. Զապո՝ Միխայէլ Ասորիի վրայ հրատարակած իր մէջ ուսումնասիրութեան մէջ վճռական փաստերով կը հաստատէ մէկ Մար Աբբաս Մոսուրեացիին կամ Կատինացիին նոյն ինքն Միխայէլ Ասորիին է, որ համարձակած է ԺԲ. դարուն մէջ խարդախել Մ. Խոթենացւոյ եւ Սերէոսի պատմութիւնները:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԾԵՐՈՒԹԻՒՆ

Ծերութեան մէջ երջանկութիւնը կամ զժառանգութիւնն սպէս արտադրոյթն է մեր անցեալ կեանքին :

* Տղայէն յետոյ աշխարհի մէջ չահաւորութիւն քան մը կը ծանցեմ, ծերութիւնն է աշն : Սոյն կրկին տարիքներու տկարութեան մէջ, յոյսերուն մէջ զոր մին կուտայ, յիշատակներուն մէջ զոր միւսը կը թողու, խորապէս յուզիչ բան մը կայ, սր մեր հոգեւոյն մէջ կը թափանցէ բարեւսիրութեան զգացումով մը, զոր անզգայութիւնն եւ թեթեւութիւնը լոկ կարող են անդիտել : Կարծես թէ կեանքը օրտունէն սկսեալ եւ գերեզմանի եզրը խանդաւատական եւ յարգական հանգամանք մը կ'առնէ, նոյն իսկ անոնց համար որ բնաւ անձնական յարաբերութեամբ մը չեն կապուած աղուհ հետ որ հոն կը մտնէ, կամ ծերունեան հետ որ կեանքէն կը մեկնի : Ո՛րքան մեծ պիտի ըլլայ այս, երբ արեւուն, երախտագիտութեան, սովորութեան կապեր միանան սիրոյ եւ սրտատկանութեան փոխարկելու այն բնական շահը զոր մարդուս առաջին եւ վերջին օրերը կ'ստանան մեզ ներշնչելու, կ'ըսէ կիզօ :

* Դժուար բան է ծերանալ, քիչ քիչ կստանանք մարմնոյ ճկունութիւնը, ոյժը, գործունէութիւնը, տեսնել իւրաքանչիւր օր որ մեր գործարանները կը տկարանան : Բայց երբ զգանք որ մեր հոգին անզգայար կերարկուելով օր օրի աւելի խոհուն կը դառնայ, աւելի տէր իր անձին, աւելի ճարպիկ զգուշանալու, աւելի ուժեղ կրելու, առանց խախտուելու ամեն դէպքերու ընդհարումէն, շահելով այս կողմէ ինչ որ կորուսած ենք միւս կողմէ, այն առեւն աշխարհի ծերացած չպիտի զգանք զմեզ :

* Զգուշանալն որ ծերութիւնը մեր զեմքին պէս մեր մաքին եւս խորշոմներ չգործէ :

* Ծերութիւն մը ամէն կիրքերէ ազատուած, խորհրդածութեան լիովն ապահովութեամբ, ապաստան մ'է հանգստեան :

* Մարդիկ ինչ չափով որ ծերանան, բնութիւնը կը խոնարհի եւ հոգիները կը բարձրանան, եւ վաղեմիկի սա խօսքին զեղեցկութիւնն աշխարհի լաւ կ'զգացուի, — Վաղ կամ անագան վայելուցեն ի հոգիս : Ասոր համար միշտ կարող ենք սիրել եւ սիրուիլ : Ծերութիւնը կը խամբէ մարմինը, բայց կ'առուզէ հոգին, երբ ապակահած չէ աշն, եւ մահուան վայելեանը մեր մաքին ծաղկափթիթումը վայելեանն է :

* Անոնց համար որ ոչ սերտ զորով եւ ոչ հանրային իրերու անձուկն ունին, կեանքի յուզումները շատ նուազած են եւ իրենց արժէքը կը կորսնցնեն յորչափ վախճանը կը մօտենայ : Բայց անոնք որ իրենցմէ ետքը իրենց զորովի առարկաները կը թողուն, անոնք որ մարդկային ազգի հաւաքական շահերուն համար եղբայրական հոգածութեան զգացումը սրնուցին, աշխարհի ջերմապէս կը վայելեն կեանքը մահուան նախընթացին, ինչքան որ պիտի վայելէին իրենց երիտասարդութեան առկեալ հասակին մէջ :

* Պէտք է միայն ծերանալ, աւելի ներողամիտ ըլլալու համար, չեմ տեսներ զարծուած յանցանք մը զոր ես իսկ զործած չըլլամ, կ'ըսէ Կէօթէ :

* Ծերութեանդ միջոցին ազոցմէզ սպասէ՛ այն բանիւր զորս գու ինքք ըրելու հորդ :

* Փափուկ զգայում մը կայ զոր կ'ուզէի ծաղկած տեսնել մեր աղոց հոգիին մէջ : Այս զգացումն որ կրցաւ պատիւ բերել նախկին յայտնի հանրապետութեանց, յարգանքն է զէպի ծերութիւնն :

* Կեանքի ծանր բեռն ուսերուն վրայ կրեց, վիշտերէ փորձանքներէ անցաւ, կեանքէն կեանք տուաւ, լոյսէն լոյս, կատարեց իր պարտականութիւնն ինչ չափով որ բնութիւնն օժտած էր զինքը, այժմ տոնուալն զո'նէ յարգանքի մը իրաւունքն ունի : Յարգեցէ՛ք ծերութիւնը :

* Քաղցրագոյն յասկութիւնը զոր բը-

նութիւնը չնորոհեց ծերացող մարդուս, մանկութեան տալու որութիւնները ծայրագոյն հեշտութեամբ վերադարձնէ ձեռք ձգելու յատկութիւնն է :

Հանդատեան այս շտաբին մէջ, կեանքի ընթացքը կը նմանի զատ ի վայրին մօտեցող առուի մը ընթացքին, որ հազար շրջաններ բոլորելէ ետքը իր հունին չընջականերէն, աղտաւ վերջապէս այն արգելքներէն որ իր խօլ ուղիս որութիւնը խանդարեցին, յաղթական ժայռերուն ոչ զայն խորտակեցին իր անցած միջոցին, մաքուր հեղեղներու փրփուրներէն որ իր ջուրերը պղտորեցին, կը ծառայի, կը դաշտանայ յանկարծ, կրկնելու համար անգամ մըն ալ, անհետանալէ առաջ, սոսկեղներն առաջին, որ իր եղերքներուն հայելին մէջ պատկերայած էին :

Քաղեց

ԽԱՉԻՍԱՐ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՄՍՈՒԹԻՒՆ (1)

Ը.

— Շատ մեծ ճշմարտութիւններ պիտի գտնուէին ձեր խօսքերուն մէջ, ըսուեց Պամփիլիոս, եթէ մեր՝ Քրիստոնեաներուս կեանքը ճշդիւ համաձայնէր ձեր ըրած նշկարողութեան : Բայց դուք փորձով չէք ճանչցած մեր վարած կեանքը, եւ ձեր զաղափարները նոյնքան սխալ են որքան խաբուսիկ : Շատ դիւրին է հայթայթել մեր վարած կեանքին տպուածաւ միջոցները, առանց երբէք բուն միջոցներու դիմում ընելու : Մարդուս կողմուածքն այնպէս ստեղծուած է որ, ցորչալի իր առողջութիւնը տեղն է՝ իր ձեռքին աշխատութեամբը շատ աւելի բան կ'արտադրէ քան որչափ պէտք ունի ապրուստին համար : Մենք ամենքս միասին ապրելով, մեր ձեռական աշխատութեամբը կրնանք

ապրեցնել մեր մանուկներն ու ծերերը, մեր հիւանդներն ու հաշմանդամները :

« Դուք կը պնդէք թէ կառավարող պատկարը մարդիկը կը պաշտպանէ արտաքին ու ներքին իշխաններու դէմ : Բայց մենք իշխանի չունինք, որովհետեւ բոլոր մարդիկը մեր եղբայրները կը նկատենք : Դուք կը պնդէք թէ Քրիստոնեաները գերին սրաին մէջ բաղձանք կը ծնցնեն կեսարի հաւատարեւու : Իրականութեան մէջ բոլորովին հակասակն է ապրու Մեր խօսքերովն ու գործերով մենք կը քարոզենք խոնարհութիւն, համբարատարութիւն ու աշխատութիւն, — ամենէն սովորական համեմատ աշխատութիւնս, այն է հողագործի կամ օրականով բանողի աշխատութիւնը : Գալով պետական գործերուն, մենք չենք ճանչնար զայն, բան չենք հասկնար անկէ : Աշխարհի վրայ մէկ բան միայն կը ճանչնանք, բայց շատ լաւ կը ճանչնանք զայն, որովհետեւ կասկածն անկարելի է. եւ այդ սա է որ մեր երջանկութիւնը մեր նմաններուն երջանկութեան մէջ է, եւ մենք միշտ հոն կը փրնտենք զայդ : Բոլոր մարդոց երջանկութիւնը կը գտնուի իրենց միութեան մէջ, եւ այս միութիւնը պէտք է յառաջ գայ ոչ թէ բուն միջոցներով, այլ սիրով : Մեծ պողոտաներու առագակին ի գործ դրած բռնութիւնը, մեր համոզումով, աւելի կամ նոսր աղայաւելի չէ ա՛յն բռնութենէն զոր զինուորներն ի գործ կը դնեն իրենց ձեռք անցուցած գերիներուն նկատմամբ, կամ ա՛յն բռնութենէն որուն կ'ենթարկէ դատաւորը՝ իր վճռին ենթարկուած յանցաւորը : Անհար է մեզի՝ մասնակցիլ այդ անսակ արարքներու, որքան ալ աննշան չափով ըլլայ : Բռնութիւնը գոյութիւն ունի մեր անձին մէջ, բայց մեր պարտականութիւնն է ոչ թէ զայն ի գործ դնել ուրիշներու վրայ, այլ ճիշդ ընել այդ բնազդին յաղթելու :

— Լաւ, ըսուեց Յուլիոս՝ ընդմիջելով. բայց դուք մարտիրոսներ ըլլալ կը թուիք, եւ ջերմապէս կը բաղձաք ձեր կեանքը զոհել հշմարտութեան համար : Արդ, ճշմարտութիւնը ձեր կողմը չէ : Դուք ան-

(1) Շար. 23րդ Թիւէն սկսեալ :

միտներ էք. հպարտութիւնէ մզում՝ ձեռնարկած էք հիւնքն քանդել ընկերային շէնքը: Դուք խօսքով սէր կը քարոզէք, բայց իրողութեան մէջ խորապէս անձնասէր էք, որովհետեւ կ'ուզէք ուրիշ մարդիկները զրկել քաղաքակրթութեան բարիքներէն. ձեր գաղափարներուն զործադրութիւնը ուրիշ արդիւնք չի կրնար ունենալ, եթէ ոչ բարբարոսութիւն, դողութիւն, բռնութիւն՝ իր բոլոր ձեւերուն մէջ, եւն, եւն, արդիւնքներ զորս՝ ըստ ձեր վարդապետութեան՝ բնաւ պէտք չէ արդիւնքի:

— Կը սխալիս, պատասխանեց Պամփիլիոս: Միայն թէ ուշագիւր անկողմնակալութեամբ նկատի առ մեր վարդապետութեանց եւ մեր հայեցակէտերուն տըւած արդիւնքները, եւ առանց իմ կողմէ այլեւս պնդել հարկ ըլլալու, պիտի սուսնես թէ մեր ուսուցումները ո'չ սպանութիւն յառաջ կը բերեն, ո'չ բռնութիւն, եւ ոչ ալ գողութիւն, որոնց դէմ՝ ընդհակառակն՝ իրական եւ յաջող պայքար կարելի է մղել միայն մեր առաջարկած միջոցներով: Այս բոլոր չարիքները գոյութիւն ունէին քրիստոնէութենէն շատ առաջ: Սկիզբէն ի վեր պայքար մղուած է առանց դէմ, ճիշտ այն միջոցներով որոնց արդիւնատուութիւնը կը ժխտենք: Այս միջոցները, որոնք բռնութեան դէմ բռնութիւնով կ'սուսելու մէջ կը կայանան, չեն կրնար ստանձ գնել ոճիրին, այլ ընդհակառակն աւելի կը գրգռեն զայն, անհատին մէջ արթնցնելով զայրոյթի եւ հակակրօթեան զգացումները: Օրինակի համար, դատավարական ահապկումով, աչքի առջեւ բերենք հռոմէական կայսրութիւնը: Ուրիշ ոեւէ երկրի մէջ, օրէնքներն ուսուցնաւորելու եւ գործադրելու համար այնքան ճիգ եղած չէ, որքան Հռոմի մէջ: Օրինագիրքը կը սովորեցուի վարժարաններուն մէջ, վիճաբանութեան առարկայ կ'ըլլայ Ծերակոյտին մէջ, եւ վերաբննութեան կ'ենթարկուի եւ կը գործադրուի ամենէն կարող եւ իմաստուն քաղաքացիներու կողմէ: Դիտենք սակայն թէ այլ խարհի ոչ մէկ քաղաքին մէջ այնքան ո-

ճիւր կամ անառակութիւն չի տեսնուիր, որքան Հռոմի մէջ, Կարգադէք հռոմէական պատմութիւնը. եւ զարմանքով պիտի ահանէք թէ ժամանակաւ հռոմէացի ժողովուրդը նշանաւոր էր իր առաքելութիւններով, թէ եւ իր օրէնքներն այնքան շատ չէին, ոչ ալ այնքան լաւ խմբագրուած՝ որքան հիմա Մեր օրերն այնքան կատարեալ եւ կոճոտ օրէնք մը ունենալով հանդերձ, ընդհակառակն կը տեսնենք բարքերու մեղկացում մը, եւ շարունակական աճում մը ոճիրներու եւ թմբկարգի յանցանքներու, որոնք բոլորովին անծանօթ էին ժամանակաւ: Ոճիրներու եւ ուրիշ բոլոր պատուհաններուն դէմ յաջողապէս պայքարելու համար գործադրուելիք միջոցներն անոնք են զորս Քրիստոնէութիւնը կը գնէ մեր արամադրութեան օտակ, այն է Սէրը, Հեթանոս զէնքերը՝ վրէժխնդրութիւնը, ճնշումը, բռնութիւնը, անհեթեթ են եւ ապագիւն: Վստահ եմ որ դուք երջանիկ պիտի ըլլաք տեսնելով որ մարդիկ չարիքէն հեռու կը կենան, ոչ թէ վախնալնուն համար պատիժէն որուն կրնան ենթարկուիլ, այլ պարզապէս չարիքէն խուսափելու բաղձալքին համար: Անշուշտ չէք բաղձար որ մարդկութիւնը նմանի այն թշուառականներուն, որոնք ոճիրի առջեւ կ'ընկրկին՝ պատիժէ վախնալնուն համար: Բոլոր արգելիչ կամ զսպողական միջոցները չպիտի կրնան արմատախիլ ընել մարդու գէպի չարն ունեցած հակամիտութիւնը, եւ չպիտի կրնան անոր տեղ գնել բարիք գործելու բաղձալքը: Այս արդիւնքը ձեռք կը բերուի, չարիքի արմատին վրայ յարձակելով միայն, եւ այդ արմատը կը գանուի մարդուն որտեղն ու մտքին մէջ: Այս նպատակին կը ձկտինք մենք, ասո՛ր հասնելու համար կ'աշխատինք, մինչ զուր օճիրին արտաքին երեւոյթներուն դէմ պայքարելով կը բաւակաւնանաք: Զէք յուսար հասնիլ մարդկային վատթարութեան աղբիւրին, որովհետեւ չգիտէք զայն երեսան հանել: Ամենէն սովորական եւ յաճախաւ դէպ ոճիրները, ինչպէս սպանութիւնը, գողութիւնը, խարդախութիւնը յաճախ ա-

ռաջ կուգան մեր ունեցած հարստութիւնն աւելցնելու, եւ կամ պարզապէս ձեռք բերելու բողձանքէն աշն քանը որ բացարձակապէս անհրաժեշտ է կեանքին, բայց այս կամ աշն պատճառով մարդ չէ գիտցած կամ չէ կորողացած հայթայթել ուրիշ կերպով: Այս ոճիրներէն ոմանք կը պատժուին օրէնքով, մինչ աւելի վարպետութեամբ գործուած եւ աւելի աղետալի ոճիրներ համարձակօրէն կը գործուին նոյն իսկ այդ օրէնքին հալանաւորութեան տակ, ինչպէս՝ օրինակի համար՝ առեւտրական խարդախութիւնը, վաշխառութիւնը, օրինական յափշտակութիւններ, եւն.: Օրէնք ով պատիժի ենթարկուած ոճիրները շատ սահմանափակ են. որովհետեւ ոճրագործները՝ պատիժէն վախճալով՝ ամէն զգուշութիւն ի գործ կը դնեն օրինական միջոցներէ խուսափելու համար, բայց միւսները օրէ օր կ'աւելնան:

ԼԷՈՆ ԹՈՂՍԹՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ լուրերը կը շարունակին գալ գաւառէն: Սասունի Մատեն Առաքելի վանահայրը կը ծանուցանէ թէ Քուրդ բարբարոս խուժանը յետօղիմական բացորոշ շարժումներ կը ներկայացնէ: Սպանութիւն, թալան, հարստահարութիւն սովորական դարձած են: Վանահայր՝ Տ. Սահիան Վ. մանրամասնօրէն կը յիշատակէ Քուրդերու կողմէ կողպաւորուած ատենները, որոնք 15-20ի կը հասնին, կը ծանուցանէ նաեւ նոր սպանութիւն մը՝ Իտարէի ժողովոյ անդամ Մեղքոնեան Դատէ. բայց հակառակ որ կատարուած թանէն 5 վայրկեան հետո տեղ մը կատարուած է սպանութիւնը, ոճրագործը կրցած է ազատուիլ — Մուշէն եւս, Առաջն. փոխանորդ Տ. Նղիշէքչի. կը գրէ թէ ծայր առաժման յուսահատութիւն կը տիրէ հայ ժողովուրդին

մէջ: Վրանաբնակ Բաղրանցիներ զիշերատեն յարձակում գործած են Նորչէն, Բերդակ եւ Առաջ գիւղերու վրայ՝ աւարառութեան նպատակով. բարեբախտաբար զինուորներ օգնութեան հասնելով 5-6 Քուրդ կը ձերբակալուին, եւ մնացեալները կը փախչին: Տեղւոյն հրամանատարը առթիւ մը յայտարարած է Առաջն. Փոխանորդին. «Ի՞նչ ընեմ, ես ալ չփոթեմ եմ. այս քաղաքին թուրքերը Սահմանագրութեան թշնամի են. եթէ անխոհեմութիւն մը ընեմ, կը կասկածիմ որ զէպք մը առաջ գայ»: — Ամասիացի այբի կին մը՝ Լուսիա՝ որ 5 տարի առաջ մտային հիւանդութեան աղղկեցութեան տակ իւլամացած էր, վերջերս ապաքինելով Իտարէի ժողովին դիմած էր՝ իր Եկեղեցին դառնալու համար: Տեղւոյն միւթէտարեֆը ոչ միայն մերժած է այդ կինը լսել, այլ եւ սպանացած է զինքը հեռուոր քաղաք մը աքսորել ու բանտարկել: Յիշեցուցած է նոյն իսկ թէ՛ ըստ Շէրիի՝ իսլամութենէ վերադարձողները մահուամբ կը պատժուին: Անհրաժեշտ զիմումները կ'ըլլան այս մասին: — Տիարպէքիւր Մուշնորդն եւս կը հաղորդէ նոր ոճիրներու Սլիվանի Պէլէն գիւղին մէջ ութ Քուրդեր կը յարձակին իրենց ծխախոտի տրտերը պահպանելու զբաղած երեք Հայերու վրայ, որոնցմէ կը սպաննուի Գալուստ Մանուկեան: Երեք օր ետքը Չաքօ գիւղին մէջ կը սպաննուի Մուրաաէ Բաղալ անուն Հայը, դարձեալ իր ծխախոտի տրտը պահպանելու միջոցին: Հակառակ կատարուած զիմումներուն, ոչ ոք ձերբակալուած է:

ԲԱՂԷՇԻ Կուտակալ Իսմայիլ Հագգը պէյ, որ տակաւին չէ վերադարձած իր պաշտօնատեղին, Բշ. օր, Մուշի երեսփոխան Գեղամ էֆ. Տ. Կարապետեանի ընկերակցութեամբ այցելեց Ազգ. Պատրիարքարան, եւ Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ.ի հետ ահապահելով յայտնեց թէ պաշտօնատեղին պիտի դառնայ, եթէ Կեղրոնը զոհացում առ իր կարգ մը պահանջներուն: Հագգը պէյ կարծիք յայտնեց որ եթէ հողային հարցը լուծուի, երբէք Քուրդի եւ Հայու խնդիր չպիտի ծագի, եւ սպանութիւններ տեղի չպիտի ունենան:

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ կողմէ պատուիրակութիւն մը՝ բաղկացած Տ. Արշա-
րունի Ա. Էն, Տ. Ղեւոնդ Մ. Վ. Գուրեանի
և Գէորգ Էֆ. Ասլանեանի, Գշ. օր Բ.
Դուռնայեցիութիւն տուաւ նորոնար վար-
չապետին, որուն բացակայութեանը ըն-
դունուեցան Ներքին գործոց նախարար
Ճէլալ պէյէն, որուն պաշտօնը շնորհա-
ւորեցին, և յետոյ մանրամասնօրէն յիշե-
ցին Վանայ, Մշոյ, Սղերդի, Սասունի,
Տիգրանակերտի եւն. մէջ զատաճած սպան-
ութիւնները որոնք յուսահատութեան
մասնած են Հայերը, Նախարարը յայտա-
բարեց թէ այս ամէնուն բուն շարժառիթը
հողային խնդիրն է, որ եթէ կարգադրուի,
այիւս Գուրգի Հայու. խնդիր չի մնար:
Պէտք է, ըսաւ, շարադրոններէն մէկն
օրինակելի կերպով պատմուի, և միւս-
ները շատ զիւրութեամբ կը զսպուին Նա-
խարարն յանձնարարեց այս այցելութեան
միջոցին յիշուած դէպքերու մասին յիշա-
տակաղիր մը մատուցուի, և անոնց մասին
նախարարութիւնը միջոցներ ձեռք առնէ^(*):
Այցելութեան միջոցին խօսուեցաւ նա-
և Չարսանճաղի խնդրոյն վրայ Ճէլալ
պէյ Շք. օր (այսօր) փոխադարձ այցելու-
թեան պիտի գայ Պատրիարքարան: Պատ-
ուիրակութիւնն այցելեց նաև Դատական
և Երկրապարտական նախարարներուն:

ԿԱԹՈՂ. Ընտրութեան համար Բղիի
կողմէ աշխարհական պատուիրակ անուան-
ուած էր Պ. Եր. Տ. Մինասեան (նախապէս
վարդապետ): Խառն ժողովը՝ զինաւորա-
բար եկեղջ. անգամայ սնդումին վրայ,
բուն վիճաբանութենէ ետք որոշեց չըն-
դունիլ Պ. Տ. Մինասեանի պատգամաւո-
րութեան պաշտօնը:

ԿՏՈՒՅ ԱՆՍՊԱՏԻ վանահայր Տ. Սաե-
փան Եպ. Ազաղատեան վախճանած է,
կ'ըսէ Վանէն հասած հեռապիւր մը ժամա-
նակին Վանայ տեղապահութիւնը վարած
էր գնահատելի կերպով:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Մշոյ նպատա-
բաշխ յանձնախումբը՝ Միութեան Կեդր.
Վարչ. Ժողովին կ'իմացնէ թէ ասկէ առաջ

(*) Այդ յիշատակաղիրը պատրաստուեցաւ խառն
ժողովի Դշ. ի նիստին մէջ:

զրկուած 250 անդը, ոսկիով եղ զնած, և
Մուշի և Սասունի դաշտերուն ամենա-
կարօտ հողագործներուն բաժնած է: Նոյն-
պէս Տալուրիկի երկաթագործ համայնքին
համար զրկուած 70 անդը, ոսկիով իրենց
արհեստին վերաբերեալ գործիքներ բաժ-
նած է: Անցեալ չարթու ևս Միութիւնը
Մուշ զրկած է 200 անգլ. ոսկի, Չուգուր
— Աւաղաղբիւրի համայնքին հողերը ան-
միջապէս ազատելու նպատակով:

Կը լսենք թէ Միութիւնը ստիպու-
ղաբար հրաւէր ուղղած է իր բոլոր մաս-
նաճիւղերուն՝ յետեւալ վճարքները Կեդրոն
փութացնելու, որպէս զի կարելի ըլլայ
անյապաղ զրական օգնութիւն մը հասցնել
Սասունի չըջանալի կարօտեալներուն:
Միութիւնը այս իմաստով ընդհանուր կոչ
մը պիտի հրատարակէ, կարեւոր գումար
մը գոյացնելու համար, Սասունի և ուրիշ
հողագործի համայնքներու տնտեսական
խեղճ վիճակը արմատական միջոցներով
բարելաւելու գովելի առաջադրութեամբ:
ԻՆԹԻՊԱԼԻ ՆԻ ՖԷՐԱՂԻ գործողու-
թեանց համար, Մալաթիոյ Բաարէի ժո-
ղովը սկսեց է չիմաստել Առաջնորդարանի
կոմիտայէրը, և միայն Միութեան կնի-
քով վկայագիրներ տալ:

ԲՍՐԵՍԷՐ աղղային մը որ Ազգ. Հի-
ւանդանոցին մէջ կը դարմանուի, իր ու-
նեցած մէկ տունը և չորս խանութները,
3000 ոսկի արժէքով, նուիրեց է Հիւան-
դանոցին: Փոխանցման գործողութիւնը
կատարուելու վրայ է:

ՉԻՆՈՒՈՐԱՎԻՈՒԹԵԱՆ խնդրոյն առ-
թիւ Պատրիարքարանէն կառավարութեան
տրուած րազրիւրը, որ կը բացատրէր թէ
ինչո՞ւ դպիրները պէտք է զերծ ըլլան զին-
ուորական ծառայութենէ, նկատի չէ առ-
նուած տակաւին: Շարթուս կ'իմացուի թէ
նոյն իսկ Արմաշի մէջ եկեղեցականութեան
պատրաստուողները զինուորագրելու պա-
հանջ կ'ըլլայ: Ի պրեմիանքի փոխ-անուշը
այս պարագան խնդիր ըրած է Պատրիար-
քարանի մօտ, որ զիմում պիտի ընէ: Միւս
կողմէ ուսուցիչները վեց ամիս զինուորա-
գրութենէ զերծ պահելու համար որոշ-
ուած չըջարեականներն ևս գաւառները
զրկուած չըլլալով զժուարութիւններ կը
ծաղին:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԻՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ARMENIA

Ասկէ առաջ ստացեր էինք ARMENIA-ի Յունիս եւ Յուլիս համարները, որոնք Ամերիկեան Հանդէսի մը վայելչութիւնը եւ գեղեցիկ պարունակութիւնը ունէին: Կողքի զարդանկարը, յօդուածներու կըցուած լուսանկարները մասնաւոր գեղեցկութիւն մը կուտան ARMENIA-ին, որ հիմա 36 երեսներէ կը բաղկանայ՝ փոխանակ առաջուան 24-ին:

Ստացանք նաեւ Օդոսսոսի թիւը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական ու նշանաւոր վէպ մը «Լընտրն Թայմզ»ի խմբագիրներէն Frederick Harrison-ի զըրջէն: Տաղանդաւոր Անգլիացի գրագէտը այս վէպով կը ջանայ նկարագրել Հայ թագաւորներուն խաղցած նշանաւոր գերը

Բիւզանդական կայսրութեան մէջ՝ տառներորդ դարուն, Ամէն Հայ կարգաւոր է այս վէպը, տեսնելու համար թէ ինչպէս Չմշկիկ ու Նիկոֆոր Հայազն կայսրերն ամբողջ Բիւզանդական աշխարհը կը համաձայնեցնեն:

Միւս ուշադրաւ եւ գեղեցիկ յօդուածներուն մէջ հարկ է յիշել մասնաւորապէս Miss Alice Stone Blackwell-ի հոսկազ թարգմանութիւնը Միամանթոյի «Ասպետին Երգ»ին:

ARMENIA-ի տարեկան բաժնեգրին է՝ մէկ տալէր Ամերիկայի, տալէր ու կէս արտասահմանի համար՝ բացարձակապէս կանխիկ:

Դիմել՝ Editor of Armenia,

P. O. Box 209 M. S. S.

New York City



Տ Պ Ա Ր Ա Ն

ՏԻԳՐԱՆ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Հիմնուած 1899ին Բաղիգի մէջ

Կ. ՊՈԼԻՍ, Սուրբ-Համամ, Մօլա-Թաւր



Ամեն տեսակ միագոյն եւ բազմագոյն արագորթիւն, շէնդ եւ սլարգ, մաքուր, խնամեալ եւ ամանագին:

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԸ. — Գրեց Բժիշկ Սիմեոն Շահ-Նազարեանց. — Սմ-
փոփ պատմութիւն հոգեւոյն հայրապետին
կաթողիկոսական կարճատեւ. բայց այնքան
լեցուն եւ արդաստար զործունէութեան,
եւ ամբողջով անոր հայրացքներուն
ի մասին հայրապետական պաշտօնին, ե-
կեղեց. բարենորոգմանց, կաթող. Աթոս-
ներու յարաբերութեանց, վանքերու, կրթ-
թանիան գործին, եւն. Տպագր. Մոսկուս.
1911, Գին 20 կոպիկ, Հասցէ Russie,
Moscou. Armianskj per. dr. S. Schah-
nazaroff :

ԿՕՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ.
կեանքն ու գործունեութիւնը (կաթողիկո-
սական ընտրութիւնների առթիւ) : Գրեց
Եր. Տ. Մինասեանց : Էջմիածնի հայկերէն
միաբան վարդապետը, մանրամասնօրէն
կը պատկերացնէ կաթող. կարեւոր թեկ-
նածուներէ մէկուն՝ իր ուսուցիչին կեան-
քը, ներկայացնելով զայն Ազգ. Եկեղեցւոյ
ջերմ ու դիտակից պաշտպան, արագոր
եկեղեցական մը՝ ամէն կողմերով, Շահե-
կան է իբր ընթերցումը՝ մրաքերու լուսա-
բանութեան համար Գին 25 կոպէկ, Հաս-
ցէ՝ նոյն :

• **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ.** — Գրեց Միհ-
րան Իսպիրեան (Սեբաստիա). — Ազգին
լաւագոյն ապագայ մը պատրաստելու ան-
կեղծ տենչով ներշնչուած հատորիկ մը,
առողջ գաղափարներով : Գին մէկ ու կէս
դրշ. : Գիմել Սեբաստիա, Լուսաբերի կամ
Ակիմեանի գրատունները :

ԱՊՏՈՒԼ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԵՐԼՕՒՔ ՀՈԼՄՍ,
(ժամանակակից պատմական մեծ վէպ),
Ա. հատոր). — Գրեց Եր. Օսեան. — Հե-
տաքրքրաշարժ վէպ, ճարտար եւ վարպետ
հիւսուածքներով : Գին Ա. հատորին 6 դշ. :

Մ. ԹԱԳԻՈՐ ՊԱԼՃԵԱՆ

ՓԱԿԵՂԱԳՈՐԾ

Երկար ժամանակէ ի վեր ծանօթ է իր
ճարտարութեամբ : Կը չինէ եւ կը պատ-
րաստէ զեղեցիկ տաղաւարներ, եւ մա-
նուանգ փակեղներ՝ ընտիր թաւիչի, աս-
ուիի, սաթէն տը լիօնի եւն. վրայ : Գի-
ները գահացուցիչ :

Գիմել Ղալաթիա, Մ. Լուսաւորիչ Ե-
կեղեցի, ուր կը գտնուի միշտ :

5—5

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴԵԱՐ ԵՐԴԱՌԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵՂԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Պատրաստեց՝

ԿՐՕՆԻԴԵՍ ՔՀՆՑ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լիցնէ եկեղեց-
ւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք
ասոր զործածութեամբ ա՛լ պէտք չպիտի
ունենան ժամագրքի, տաղարանի, չարա-
կանի, փոխասացի եւ այլ յարակից տես-
րակներու եւ գիրքերու : Տէր եւ հրատա-
րակիչ Աղեֆսանդր Եօզիասյեան : Տպ. Մար-
զուան, «Կիւթնպէրկ» տպարան, 1911:
Գին 7 դրշ. (մէճիս 1915) : Բօսդի ծախք
30 փրյ. :

3—3

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Համաւ Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ